ԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

ԵՄ-ԵԿՀ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ՀԱՅՏՈՐՈՇՈՒՄ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՄՇԱԿՈՒՄ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 30-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2025Թ.

ՎԱՅՐԸ՝ «ՀՈԼԻԴԵՅ ԻՆՆ ԵՐԵՎԱՆ - ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ» ՀՅՈՒՐԱՆՈՑ

0010 ԵՐԵՎԱՆ, ԱՄԻՐՅԱՆ 2

Նախապատմություն և հիմնավորում

Այս աշխատաժողովը կազմակերպվել է Եվրոպական Կրթական Հիմնադրամի (ԵԿՀ) կողմից՝ 2024 թվականին իրականացված «Կրթության արագ հայտորոշման» (RED) նախնական արդյունքները ներկայացնելու և քննարկելու նպատակով: RED-ն իրականացրել է ԵԿՀ-ն՝ որպես Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող՝ «Կրթական բարեփոխումների և հմտությունների աջակցություն Արևելյան գործընկերությունում» (SER) ծրագրի առաջին բաղադրիչ:

RED մեթոդաբանությունը նպատակ ունի բացահայտել և փաստագրել կրթության ոլորտի կարևորագույն բաղադրիչները, ներառյալ համակարգի թույլ կողմերը, քաղաքականության բացերը, խոչընդոտներն ու ռիսկերը: Արդյունքները նպատակ ունեն տեղեկատվություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Եվրոպական միությանը և զարգացման գործընկերներին՝ օգնելով ուղղորդել նրանց գերակա միջամտությունները, ինչպես նաև կաջակցեն ԵՄ և Հայաստանի միջև քաղաքականության երկխոսությանը:

Այս աշխատաժողովը կհամախմբի ազգային գործընկերների լայն շրջանակ՝ ինչպես պետական կառույցներից, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպություններից: Աշխատաժողովի նպատակներն են՝

i) ներկայացնել Հայաստանի վերաբերյալ «Կրթության արագ հայտորոշման» (RED) զեկույցի հիմնական բացահայտումները և նախնական առաջարկությունները.

ii) հավաքել կարծիքներ, ներառյալ լրացուցիչ առաջարկություններ կամ թարմ տվյալներ և տեղեկություններ, որոնք կնպաստեն զեկույցի վերջնականացմանը:

Թիրախային մասնակիցները

Աշխատաժողովը կհամախմբի հետևյալ մասնակիցներին՝

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ), կրթության մարզային կառույցների, ինչպես նաև ԿԳՄՄՆ ենթակայությամբ գործող կազմակերպությունների և կրթական համակարգում ներգրավված ճյուղային նախարարությունների (օրինակ՝ Ֆինանսների նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն) ներկայացուցիչներին.

- հանրակրթական, մասնագիտական կրթության և ուսուցման, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներին.
- կրթության ոլորտում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին.
- Հայաստանում Եվրամիության պատվիրակության և Եվրոպական Կրթական Հիմնադրամի ներկայացուցիչներին:

Աշխատաժողովը կանցկացվի անգլերեն և հայերեն լեզուներով՝ ապահովելով միաժամանակյա թարգմանություն:

ՕՐԱԿԱՐԳ

Ժամ	*Վայր: «Հոլիդեյ Ինն Երևան - Հանրապետության Հրապարակ» հյուրանոց, Երևան, Սմիրյան 2*
8:30 – 9:00	*Գրանցում*
09:00 – 9:45	**Աշխատաժողովի բացում** Վարող՝ *SER ազգային համակարգող, Ռոբերտ Ստեփանյան* Բացման խոսք՝ - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, *Նախարարի Տեղակալ Արաքսիա Սվաջյան* - Եվրոպական Կրթական Հիմնադրամ (ԵԿՀ), *Տիմո Կուուսելա, Մարդկային կապիտալի զարգացման ավագ մասնագետ, SER ծրագրի համակարգող.* «Արևելյան գործընկերությունում կրթական բարեփոխումների և հմտությունների աջակցություն» տարածաշրջանային ծրագրի իրականացման ընթացիկ վիճակը
9:45 – 11:00	**Նիստ 1:** **«Կրթության արագ հայտորոշման» (RED) արդյունքների ներկայացում** Վարող՝ *Մարի Դորլեան, Մարդկային կապիտալի զարգացման ավագ մասնագետ, RED-ի համակարգող, ԵԿՀ* - RED զեկույցի արդյունքների ներկայացում՝ ըստ թեմատիկ բաժինների (անհավասարություններ, ֆինանսավորում, կառավարման համակարգ) և նախնական առաջարկությունների ներկայացում - Արձագանքների հավաքագրում
11:00 – 11:20	*Ընդմիջում*
11:20 – 12:45	**Նիստ 2:**

	Ընդհանուր քննարկում. Զեկույցի եզրակացությունների քննարկում և առաջարկությունների համատեղ մշակում Վարողներ՝ *ԵԿՀ և ԿԳՄՄՆ* - Կրթության ոլորտի արդյունավետության բարելավման համար լրացուցիչ առաջարկությունների հավաքագրում *ԵԿՀ RED թիմի անդամների աջակցությամբ* - Քննարկման ամփոփում, *Մարի Դորլեան, ԵԿՀ*
12:45 – 13.00	**Աշխատաժողովի փակում** Վարող՝ *SER ազգային համակարգող, Ռոբերտ Ստեփանյան* Եզրակացություններ և հետագա քայլեր՝ - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, *Նախարարի Տեղակալ Արաքսիա Սվաջյան* - Եվրոպական Կրթական Հիմնադրամ, *Տիմո Կուուսելա*
13:00 – 14:00	*Ճաշ*